797. ԽԱՉՔԱՐ. վերին կտորը, ընկած զանգակատան փլատակների մեջ, քիվին և խորանում, 3 տող.

ՆՇԱՆՈ Ա3 ԲԱՐԵԽԱՒ-
Ս ԼԵՐ Պ[Ա]Ր[ՈՆ] ԷՍՆԱԹԱՒՓԻՆ:
ԹՎ[ԻՆ] ՉԽԸ (1299):

798. ԽԱՉՔԱՐ. թևավոր, Քոբայրավանքի գլխավոր խմբից հյուսիս, Չորրորդ եկեղեցի տանող ոտնուղու եզրին, հորդաբուխ աղբյուրների մոտ.

Ի ԹՎ[Ի]Ս ՉԾԲ (1303):

Ծանոթ. Արձանագրությունը սուրբ նշանի բարձր պատվանդանի վրա է, չորս տող, եղծված ու հազիվ նշմարելի, որը հնարավոր չի եղել կարդալ: Թևավորի առաջ կա 4 սալատապան՝ անհիշատակագիր:

ԴՍԵՂ

Մշակութային ժառանգության արժեքներով հարուստ այս գյուղի հին անունն ավանդված չէ, իսկ Դսեղը ԺԲ դարից ավելի վաղ չէ, և այն, թերևս, ինչպես նկատել է Ջալալյանցը, նախապես կոչվել է Դրսեղ, Մամիկոնյանների ժառանգական կալվածքներից՝ Տայքից *հեռու, դուրս, դրսում եղավ* իմաստը (եթե ոչ Դարսեղ): Նույն կարծիքը կրկնել է Էփրիկյանը:

Գյուղի տարածքում կան մ.թ.ա. II հազ. մինչև ԺԷ դ. բազմաթիվ հուշարձաններ: Դրանց թվում կարևորվում են Տզրկածովի և Դիտի ամրոցների ավերակները, վանական համալիրները, եկեղեցիները, մատուռները, գեղահրաշ կոթողներն ու խաչքարերը:

Դսեղը հանրահայտ դարձավ Մամիկոնյան նախարարական տան շնորհիվ: Հերոսական անցյալով Մամիկոնյանների առաջին ներկայացուցիչն այս կողմերում Աշոտ մարզպանն էր, որը Կյուրիկե Բ թագավորի հրամանով 1050 թ. կառուցեց Վարդաբլուր գյուղի ամրոցի ապարանքը: Նրանք նշանակալի մասնակցություն ցուցաբերեցին սելջուկների դեմ մղվող ազատագրական պատերազմներում՝ արժանանալով Զաքարյանների հովանավորությանը, նաև ձեռք բերելով ընդարձակ տիրույթներ: Աշոտի հաջորդ Համազասպ մարզպանից սկսած տոհմը կոչվում է Համազասպյան: Նրանցից նշանավոր էր Սարգիս զորապետը, որը սպանվել է 1201 թ. և թաղվել Սանահնի վանքում:

Հասարակական, պետական նոր միջավայրում, տնտեսական վերելքի պայմաններում Մարզպան Համազասպյանի և նրա որդիներ Ասլանբեկի, Գրիգորի, Սարգսի, Ամիրայի, եղբոր՝ Սմբատի և նրա որդիներ Համլիկի ու Սադունի ժամանակներում տոհմը հասավ հզորացման բարձրակետին, ԺԳ դ. առաջին կեսում ավարտվեցին Բարձրաքաշի ու Քառասնիցի շինարարական աշխատանքները, գյուղում կառուցեցին ապարանք ու եկեղեցի: Զաքարյանների գերակայությամբ, Կյուրիկյանների, Վաչուտյանների, Պռոշյանների, Արծրունիների համագործակցությամբ Դսեղի Համազասպյան-Մամիկոնյանները արժանավայել դիրք գրավեցին երկրում, նրանց կալվածքներն ընդգրկում էին Դեբեդի աջակողմյան վտակներ Մարց և Ալարեքս գետակների անտառապատ ձորահովիտներն ու արգավանդ դաշտերը՝ թեև կալվածքներ ունեին և այլուր (Կոտայք, Ուրծ, Խրամ): Տոհմի հևքը շարունակվեց մինչև դարավերջ, իսկ այնուհետև զրկվեց երբեմնի փառքից ու հզորությունից: Մատենագրական-վիմագրական աղբյուրների հիման վրա Ա. Շահինյանը շուրջ 40 տարի առաջ կազմել է Համազասպյան-Մամիկոնյան տան ճյուղագրությունը («Լրաբեր», 1963, N 3, էջ 84-93), որտեղ ներկայացված է տոհմի 6 սե-

ռունդ: Նոր տվյալները հնարավորություն են ընձեռում լրացնելու այս արգասավոր նախաուսումնական տան բազմաճյուղ տոհմագրությունը՝ այն հասցնելով 12 սերնդի՝ շուրջ 400 տարվա ընթացքում: Սակայն այս դեպքում ևս այն հեռու է ամբողջական պատկերը տալուց: Սկզբնաղբյուրներում քանիցս հիշատակվում են Սարգիս, Հասան, Մարծպան, Մամիկոն, Վարդան և այլ Մամիկոնյաններ, որոնց փոխկապերը չեն պարզվում, և այս ուղղությամբ պետք է լույծ հետազոտություններ կատարվեն:

Իսկ Դսեղում շարունակվում էր կյանքը, գործում էին հոգևոր կենտրոնները: 1652 թ. Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, Թումանի որդի Սարգիս քահանան նորոգում է մի «Ավետարան» «ի տանս *Տաշրու*, ի յերկիրս *Լոռու*... ի դուռն Ս. Լուսաւորչին, ի գիւղաքաղաքն *Դսեղու*».[75]

ԲԱՐԾՐԱՔԱՇԻ ՎԱՆՔ

Վանքի անվան կապակցությամբ Հ. Ոսկյանը գրում է. «Բարձրաքաշ անունը կամ յորջորջանքը, որ կը մնայ մեկնութեան կարօտ – մի՞թէ Բարձրէն տեսնուող եւ իրեն քաշող թէ սրտերը դէպի վեր ու բարձր տանող ու քաշող»,[76] որով փորձում է կապել երկնային ուժերի՝ աստծո հետ:

Թերևս տարակուսանքի հարկ չկա. Բարձրաքաշ է կոչվել գյուղի նկատմամբ ունեցած դիրքի պատճառով. հարթավայրից ցած, քաշ, ներքև՝ դեռևս Ժ դ. կառուցված եկեղեցու տեղը մատնանշելու ձգտումով: Բարձրաքաշը դարձել է տեղանուն:

Հումազասպյան-Մամիկոնյանների ձեռնարկած ամենանշանավոր շինարարական գործը, անշուշտ, Բարձրաքաշի սուրբ Գրիգոր վանքի կառուցումն էր, որը դարձավ երկրի հոգևոր-մշակութային կարևոր կենտրոններից մեկը ու տոհմական դամբարան՝ թեկուզ ցայժմ հայտնի չէ, թե նրանցից ով է թաղվել այնտեղ:

Վիմագիր արձանագրություններում և ձեռագրաց հիշատակարաններում հոգևոր այս կենտրոնը կրում է *վանք, սուրբ ուխտ, տուն, Բարձրաքաշ, Բարձրաքաշի սուրբ ուխտ և սքանչելագործ սուրբ Գրիգոր,*[77] *Բարձրաքաշի սուրբ Գրիգոր վանք* անունները:

Բարձրաքաշի վանքը հիմնարկվել է Բագրատունյաց թագավորության ժամանակ՝ չնայած այդ մասին պատմական տեղեկություններ չկան մեր ձեռքի տակ: Ելնելով համալիրի հյուսիսային միանավ սրահի ճարտարապետաշինարարական յուրահատկություններից (հատկապես բեմին կից երկարավուն ուղղանկյուն խորանները), այն կարելի է վերագրել Թ-Ժ դարերին:[78] Բայց իբրև վանական հաստատություն կառուցապատվել-ամբողջացվել և կանոնավոր գործունեություն է ծավալել Մամիկոնյանների իշխանության ընթացքում, ու այդ ժամանակ էլ հոգևոր-մշակութային այս կենտրոնին շնորհվել է *սքանչելագործ սուրբ Գրիգոր* անունը՝ մեծ Քահանայապետի մասունքներն այնտեղ ամփոփելու պատրվակով:[79]

---

[75] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ., էջ 491:

[76] *Հ. Ոսկյան*, Գուգարքի վանքերը, էջ 18:

[77] Վերջին անունն է կրում նաև գյուղամիջյան քանիցս վերաշինված եկեղեցին:

[78] Դսեղի ճարտարապետական կոթողների նկարագրությունն ու վերլուծությունը տրված է Գ. Շախկյանի «Լոռի» աշխատության 36-41 էջերում: Լալայանը շփոթել է այս եկեղեցին Ս. Հարությունի հետ, և ժամանակը, հայտնի չէ ինչից ելնելով, համարել է ՈԾԳ – 1205 թ. (Ազգ. հանդ., II-VIII, էջ 423):

[79] Ձեռագրաց հիշատակարանների գրիչները Լուսավորչին մեծարում են «Սքանչելագործ սուրբ Գրիգոր» հորջորջումով, որին չպիտի շփոթել այդ պատվանունին արժանացած քրիստոնյա առաջին հայրերից մեկի՝ Գրիգոր Սքանչելագործ Նյուսացու (Նիկիա) հետ: